Արձանագրություն N 2

«ՀՀ ՔՊԿ-ՇՀԱՊՁԲ-16/11» ծածկագրով վառելիքի /բենզինի/ ձեռքբերման շրջանակային համաձայնագրով իրականացվող ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Երևան 27 դեկտեմբերի 2016 թ.
ժ 9:30

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Բաղինյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հովսեփյան /գնահատող/, Գ.Մեսրոպյան /գնահատող/, Գ. Խաչատրյան /բացող/, Կ. Անտոնյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Մկրտչյան

1. **« ՀՀ ՔՊԿ-ՇՀԱՊՁԲ-16/11» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին**

(Հ.Բաղինյան)

1.1. Ընդունել ի գիտություն, որ էլեկտրոնային armeps համակարգի միջոցով շրջանակային համաձայնագրով իրականացվող «ՀՀ ՔՊԿ-ՇՀԱՊՁԲ-16/11» ընթացակարգին առգիծ հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Հասցե, հեռախոսահամար
1	«Ֆլեշ» ՍՊԸ	ք. Երևան, Ե. Կողբացու 30, Հեռ. (010)534233
2	«ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	ք. Երևան, Պուշկինի 1փող., Հեռ. (010)540911
3	«Մաքսիուր» ՍՊԸ	ք. Երևան, Տպագրիչների 8, 1/1 տարածք,Հեռ. (010)526751

2. **Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

(Հ.Բաղինյան)

2.1 «Ֆլեշ» ՍՊԸ-ի, «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա է պահանջվող բոլոր փաստաթղթերը, իսկ «Մաքսիուր» ՍՊԸ–ի ներկայացրած հայտում՝ Հայտարարություն Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ /հավելված 4.2/-ը բացակայում է:

2.2 Հանձաժողովը որոշեց.

1) «ՀՀ ՔՊԿ-ՇՀԱՊՁԲ-16/11» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.1.2 ենթակետի համապատասխան նիստը կասեցնել մինչև 28.12.2016թ. ժամը 12:30-ը,

2) հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին, որ հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 10.02.2011թ. N168-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետը՝ սահմանված կարգով տեղեկացնել «Մաքսիուր» ՍՊԸ–ին՝ հրավերով նախատեսված Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության

ապրանքներ մատակարարելու վերաբերյալ հայտարարության մասին հավելվածը մինչև նիստի կասեցման ավարտը ներկայացնելու համար:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

28 դեկտեմբերի 2016 թ.
ժ 12:30

2.3. էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթի ներկայացման մասին

«Մաքսիուր» ՍՊԸ-ի կողմից Հայտարարություն Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ /հավելված 4.2/-ը էլեկտրոնային փոստով ներկայացվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին
(Հ.Բաղինյան)

3.1. Մասնակիցների կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկները.

1-ին չափաբաժին՝ Բենզին, ռեգուլյար

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/
1	«Ֆլեշ» ՍՊԸ	5 262 250	162 750	1 085 000	6 510 000
2	«ՍիՓիԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ	4 998 000	252 000	1 050 000	6 300 000
3	« Մաքսիուր» ՍՊԸ	5 223 064	128 436	1 070 300	6 421 800

3.2. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ընթացակարգի առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին
(Հ.Բաղինյան)

Հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը Հանձնաժողովը որոշեց.

առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝ «ՍիՓիԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին, իսկ երկրորդ տեղ՝ «Մաքսիուր» ՍՊԸ-ին :

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Հ.Բաղինյան)

Համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. N168-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի՝ Հանձնաժողովը որոշեց ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ « ՍիՓիԷՍ Օիլ Քորփորեյշն » ՍՊԸ–ին, առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Հ.Բաղինյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներին՝« ՍիՓիԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ–ի և «Մաքսիուր» ՍՊԸ–ի, «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 28.12.2016թ. հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին

(Հ.Բաղինյան)

«ՀՀ ՔՊԿ-ՇՀԱՊՁԲ-16/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կողմից հարցման արդյունքը ստանալուն հաջորդող օրը, բայց ոչ ուշ քան ՀՀ կառավարության 10.02.2011թ. N168-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված ժամկետը «ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական տուն 3, 4-րդ հարկ, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե» հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Նախագահ՝	_____	Հ. Բաղինյան
Անդամներ՝	_____	Ա. Հովսեփյան
	_____	Կ. Անտոնյան
	_____	Գ. Խաչատրյան
	_____	Գ. Մեսրոպյան
Քարտուղար	_____	Ն. Մկրտչյան